ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«29» հունվարի 2026թ. N ՄՈ/54-Ա

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ «ԱՂԱՎՆԱՏԱՆ Ղ. ԱԲԳԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԲՆԱԿԱՆՈՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի 2026 թվականի հունվարի 14-ի Ե/01/88-26 գրությունը Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի «Աղավնատան Ղ. Աբգարյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության հանրակրթական ծրագրերի բնականոն ուսուցման աշխատանքները կազմակերպելու նպատակով.

որոշում եմ՝

1. Մինչև Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի «Աղավնատան Ղ. Աբգարյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության շենքի վերանորոգման շինարարական աշխատանքների ավարտը Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի «Աղավնատան Ղ. Աբգարյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության նախակրթարանի և 1-4-րդ դասարանների աշակերտների հանրակրթական ծրագրերի բնականոն ուսուցման աշխատանքների կազմակերպումն իրականացնել Վաղարշապատ համայնքի Աղավնատուն բնակավայրի Նշան Մաթևոսյան փողոց, 18 հասցեում գտնվող մշակույթի տան շենքում (2 հերթով), իսկ 5-12-րդ դասարանների աշակերտների հանրակրթական ծրագրերի բնականոն ուսուցման աշխատանքների կազմակերպումն իրականացնել «Արագածի Մ. Մեխակյանի անվան միջնակարգ» պետական ոչ առևտրային կազմակերպությանն անհատույց

օգտագործման իրավունքով ամրացված՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի Արագած գյուղի 5-րդ փողոց 12 շենք հասցեում գտնվող դպրոցի շենքում՝ 2-րդ հերթով:

2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչությանը, քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչությանը և ֆինանսական վարչությանը (վարչությունների պետեր՝ Ս. Բուդաղյան, Դ. Ավետիսյան և Ա. Հակոբյան)՝ ապահովել սույն որոշման կատարումը:
3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչությանը (պետ՝ Ս. Բուդաղյան)՝ սույն որոշմամբ նախատեսված աշխատանքներին մասնակից դարձնել «Աղավնատան Ղ. Աբգարյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ա. Վարդանյանին, վարչատնտեսական մասի համակարգող Ռ. Հովակիմյանին, «Արագածի Մ. Մեխակյանի անվան միջնակարգ» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Գ. Անդրեասյանին, վարչատնտեսական մասի համակարգող Ս. Հարությունյանին, «Աղավնատան Ղ. Աբգարյանի անվան միջնակարգ դպրոց» և «Արագածի Մ. Մեխակյանի անվան միջնակարգ» պետական ոչ առևտրային կազմակերպությունների հաշվապահներին (համաձայնությամբ):
4. «Աղավնատան Ղ. Աբգարյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգող Ս. Հարությունյանին՝ ապահովել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի դեկտեմբերի 21-ի N47-Ն հրամանի 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված հավելվածի 21-րդ կետով սահմանված ուղևորափոխադրման ծառայության ձեռք բերումը՝ պայմանով, որ այդ ծառայությունից պետք է պարտադիր կարգով օգտվեն շահառուներ հանդիսացող «Աղավնատան Ղ. Աբգարյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության մանկավարժական աշխատողները և սովորողները:
5. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի տեղակալ Արամ Գրիգորյանին:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Восстановимая подпись

X

ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Подписано: KHACHATRYAN VAHRAM 2902840179 ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ